

ԴՐՈՇԿ

Հ.Յ.Գ. ԲԻՆՈՅԻ
ՕՐԿԱՆՈՆ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ “ ՕՐԳԱՆ

Ա Յ Բ Ո Ւ Բ Ե Ն

Նոյեմբեր, 1893 թ.

Այբուբեն կայ կարգալ-գրել սովորե-ու համար-կայ այբուբեն, այսինքն տարրական օրենքներ՝ զանա-զան մասնագիտութիւնների համար. կայ այբուբեն նաև հասարակական խնդիրների շրջանում:

Դժբարդաբար, այս վերջին տեսակի այբուբենն ան-հասկանալի կամ տարօրինակ է համարվում շատերի համար: Չը նայելով, որ հասարակական երևոյթներն աշխարհիս բոլոր անկիւններում պատմութիւնը դարե-ցդար կրկնում է զարմանալի նմանութեամբ՝ մեր յեղա-փոխականներից շատերի համար, կարծես, հայը և Հայ-աստանը մի բացառութիւն են, որ դուրս պիտի համար-վին համամարդկային ընդհանուր օրենքների ազդեցու-թիւնից: Հայ-յեղափոխականը չէ ուզում որ և է առն-չութիւն ունենալ մարդկային պատմութեան հետ: Ան-մեղների անարատ արիւնով շողախլած, անարդարու-թեան սև դրոշմով կնքված, միլիոնաւոր ժողովուրդ-ների հառաչանքներով և սգով արատաւորված պատ-մութեան էջերը մենք չենք ուզում ձանաչել: Այո, յե-ղափոխական այբուբենը գտնված, ընդունված չէ մեր զանազան գործիչների կողմից:

Բայց չէ՞ որ այդ այբուբենը կ'յլ և չէ՞ որ նրա ընդունելը կը լինէր ամենանպատակայարմար միջոց մեր երկրի յեղափոխական ձգտումները մի ընդհանուր լեզ-ւով և ոգով արտայայտելու համար:

Այո, այդ այբուբենը կայ և մեզնով չէ, որ նա ո-րոշվում է: Միմիայն, բնականաբար, նա կը մ'նայ ան-ըմբռնելի բո որ այն "գործիչների" համար, որոնք չեն արտայայտում ո՛չ բառականաչափ զգացմունք դէպի մեր անբարդ ժողովրդի անպաշտպան շահերը և ոչ էլ ա-ռողջ միտք՝ համամարդկային պատմութեան և ներկայ ժամանակների ուսումնասիրութեամբ հայի դրութիւնը լուսաբանելու համար:

Հայ ժողովուրդը ազատութիւն է ուզում, այս

ամենքի համար պարզ է, և այս խօսքը միակ տառն է միակ այբն է, որի անհրաժեշտութիւնն ընդհա-նուրի կողմից ընդունված պէտք է համարել: Բայց մի տառ այբուբեն չէ կազմում. այբից յետոյ գա-լիս է բենը:

Ի՞նչ է նշանակում ազատութիւն. ի՞նչ է հաս-կանում մեր ժողովուրդը ազատութիւն խօսքը արտասանելիս:

Հատերը կասեն. քաղաքական ազատու-թիւն, ազգային անկախութիւն, հայ-կական կառավարութիւն տաճկակա-նի տեղ:

Դա, ՚ի հարկէ, շատ որոշ պայման է. բայց բովան-դակում է արդեօք իր մէջ ժողովրդի բոլոր իղձերը, գաղափարները, նրա բոլոր պահանջներն ազատ դը-րութիւնից: Ազատութեան ձգտելով՝ արդեօք մեր ժողովուրդն ուզում է միմիայն իր ազգային ինքնասի-րութեանը բաւականութիւն տալ, թէ այդ դրութեան հետ նա անշուշտ կապում է առհասարակ իր կեցութեան. ընդհանուր բարեփոխումը: Մենք չենք հերքում առաջին մտախի նշանակու-թիւնը, բայց հակառակ ենք այն հայացքներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա անկախութեան հետ, համարելով այդ բարեփոխումը ինքնըստինքեան հասկանալի, բնական, անհրաժեշտ հետևանք անկախութեան: Սա է այն բենը ը որի վերայ անհրաժեշտ է կանգ առնել: Բայց համա-ձայնվենք նախօրէն, որ իսկապէս ժողովուրդն ազատու-թիւն է կամենում ոչ թէ լոկ ազգային ինքնասիրութիւ-նից դրդված, այլ գլխաւորապէս իր առօրեայ կեանքը մաշող, ճնշող հանգամանքների ազդեցութեան ներքոյ:

Խօսեցրէք Հեքքեարի, Մանազկերտի, Սասնոյ մի մա-սի հային, որը յայտնի է իր տեղում Փլա հ (ստրուկ) անուան տակ: Դա պատկանում է այս կամ այն քիւրդ ազգային, որը հարստահարում է նրան ուզածին պէս, ծախում է նրան ուրիշին 10-20-30 լիրայով, և միևնոյն ժամանակ հովանաւորում է հայ վաշխառուի

և միւս քիւրդ աղաների դէմ. այդ հայը, որ տարին մի երկու անգամ հազու է տեսնում տէրութեան պաշտօնեայ, դժուար թէ հետաքրքրվի հայկական օրէնսդիր ժողովով կամ ազգային ազատ մամուլով. նրա համար, ի հարկէ, աւելի բնական է ազատութեան ասկ հասկանալ Փլա հի դրութիւնից դուրս գալը, ֆէօդալ բէկի կամայականութիւնից անկաս լինելը և այլն . . .

Աերցրէք Կարնոյ դաշտի, Փոքր Հայաստանի, Անայ շրջակայքի ժողովուրդը. քրդերի յարձակումներն այս կողմերում նուազում են այն նշանակութեան առաջ, որ ունեն հարկերի չափազանց ծանրութիւնը և վաշխառուների կողպատումները՝ վարչական կազմակերպութեան փթածութեան հետ միասին: Հարկային բարեփոխումները, հողի և նրանից ստացված արդիւնքների ազահոյութիւնը զանազան էֆենդիների ճանկերից, - ահա այն պայմանները, որ առաջնակարգ տեղ են բռնում այս հայերի կեանքում:

Ալաշկերտի հայը, իր յետին չքաւորութեան մէջ, ազատութիւնից աւելի շուտ կուզենար խաղաղ դրափի: Թէ որքան նշանաւոր է նրա համար այս պայմանը, այդ պարզ է նրանից, որ գիտենալով հանդերձ, որ ազգային անկախութիւնը Ռուսաստանի սահմաններում հայերի համար կատարեալ ցնորք է, գիտենալով, որ ազգային ինքնասիրութիւնը պահանջում է հաստատ լինել իր ազգային կրօնին, այսուամենայնիւ իւր անհանգիստ դրացիից-քրդից-ազատվելու համար նա այսօր պատրաստ է ամբողջ գաւառներով Ռուսաստան գալթել և, եթէ պահանջվի, նաև ուսադաւանութիւն ընդունել:

Խօսեցրէք հայ գիւղացուն, հայ արհեստաւորին, վաճառականին կամ հայ իստեղիգենտին, ընդհանուր եղբակացութիւնը բոլոր լածներից կը լինի՝ ազատութիւն ցանկանալով, հայ ժողովուրդը ձգտում է աշխարհի դրօշ թեան, որ ազատված լինի ինչպէս մահմեդականներից, հալածվողի իր անարգ դրութիւնից, ինչպէս օրէնքի ասաջ եղած անհասարութիւնից, նոյնպէս և հարկերի ծանրութիւնից, քրդերի և պաշտօնեաների յափշտակութիւններից, բէկերի և վաշխառուների իշխանութիւնից, հողին վերաբերեալ զեղծումներից, իր յուսահատ չքաւորութիւնից, իր աստանդական մուրացկանի դրութիւնից և այլն . . .

Այժմ հարցնում ենք մեք. ի՞նչ կարգեր կարող են ապահովել այդ պահանջները. ի՞նչ կարգեր կարող են բաւականութիւն տալ իր ճակատի քրտինքով ապրող մեծամասնութեան բոլոր արդար պահանջներին:

(Կը շարունակվի)

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի 8

Համիդիէի հեծե ազօրքն անպատմելի, չըլված գազանութիւն և չարիքներ կը դործէ Մուշի, Անայ գաւառներու մէջ և մեր կողմերը: Հայ ժողովորդի կրած կեղեքումները, Համիդիէի հեծեազօրքի երեսէն ալ ամեն չափ ու սահման անցաւ: Ադոնց գործած ասպատակութիւն, յափշտակութիւն, բռնութիւն, սպանութիւն ու կամայականութիւններն աներևակայելի են: Յիշեալ հայաբնակ գաւառներու մէջ հայը սյլ և ս իր անձի, գոյքի և պատուի տէրը չէ. անապահոյութիւնը կը տիրէ ամեն տեղ: Կարինի, Ալաշկերտի ճանբան դոցված, հաղորդակցութիւնը դադարած է: Հաղորդակցութիւնը դադարած է մինչև իսկ հայ գիւղերու մէջ. 2-3 ժամ: հեռաւորութիւն ունեցող գիւղերու մէջ անվնաս, առանց կողպատվելու, առանց արիւնվելու, առանց սպանվելու ճանբորդութիւնը հրաշքներու կարգն անցած է: Ժողովրդի սնտեսական վիճակը յիշեալ զօրքերու շնորհիւ կատարեալպէս քայքայված և յոյժ թշուառ վիճակի մէջ է: Հեծեազօրքի կամայականութեան թեթև դիմադրութեան յանդնողը շարաչար կը գանակոծվի և մահով կը պատժվի: Արձակ համարձակ, օր ցերեկով տաւար, ոչխար և ձի քշել տանելը սովորական դէպքերու կարգ անցած է: Համիդիէի հեծեազօրքը երկրի կատարեալ պատիժ, պատուհաս է դարձած իր հաստատմանէ ՚ի վեր: Կառավարութիւնն այս ամէնը քաջ գիտէ, բայց աչքերը կը գոցէ, դիտմամբ անգիտնալ կը ձևանայ: Բայց արևի լոյսի պէս ճշմարտութիւն է, որ կառավարութիւնն է, որ կը թեւադրէ, նա է, որ կը քաջալերէ զօրքերը: Մէկալ քիւրդերն ալ օրինակ առնելով զօրքէն, ձեռքերէն եկած շարիք և վնաս կը հասցնեն հայ ժողովրդին. մէկի պակաս թողածը մէկայը կը լրացնէ: Քանի մը անգամ կառավարութեան դիմումներ եղան, դանգատվեցան զօրքի գործած չարիքներու և հասցրած վնասի դէմ, բայց անլսելի մնալէն զատ, դարձեալ իրենք տուժեցին, ըստ առածին. "Գիր զմեզ ՚ի վերայ մեղաց", որովհետև շատերը պատժվեցան և բանտարկվեցան իբրև զօրք լանիրաւի զրպարտողներ, տէրութեան անհաւատարիմներ և խռովարարներ: Համիդիէի զօրքերը ճանբաներու վրայ լեռները, դաշտերը ասպատակութիւն, թալան թրաշ անելէն զատ՝ մինչև իսկ գիշերը տուներ կը կոխեն և ինչ որ գտնին՝ կը յափշտակեն: Շատ մը հարուստ կարծված տուներ կոխվեցան և կողպատվեցան. շատ մ' ալ ընտանիքներու պատիւը բռնաբարվեցաւ: Աերջին գազանութիւն ընողները Համիդիէի հեծե ազօրքի սպաներն են: Ասոնք մինչև իսկ օր ցերեկով մարդ կը խաւրեն մէկու մը կինը, մէկայի հարսը, երրորդի քոյրը կը պահանջեն: Սպաներու պահանջը չը կատարողներ կը պատժվին շարաչար: Ոմանց խոտի դէպքեր և մարագները կը վառեն, քանի մը վայրկենի մէջ մոխիր կը դարձունեն խեղճ գիւղացու և իր ընկեր տաւարի ամբողջ տարուայ սնունդը, միակ յոյսը: Ռւրիշներու տաւարը կամ ոչխարը կը քշեն, արտը կը կերցնեն, իսկ ոմանց ալ հրացանի կը բռնեն, շատ անգամ նոյն իսկ իրենց տուններու մէջ:

Հայերը տեսնելով երկրի անմխիթար դրութիւնը, կառավարութեան անտարբերութիւնը և անհոգութիւնը,

սկսած են թողնել տուն տնդ, արտ ու արօտ, վանք, եկեղեցի, սիրելիներու գերեզման, լաց արտատունքով, կոտրած սրտով, մահ և ամեն վտանգ աչքի առաջ առնելով կը փախչին, կը դաղթեն սահմանագլխէն Ռուսիա, որպէս զի գէթ իրենց գլուխը փրկեն: Շատերը փախած են առանց արտերը հնձելու, առանց ցորենը ժողվելու: Սահմանագլխէն անցած փախած ընտանիքներու թիւը 400-500-էն աւելի է: Սահմանագլխի շատ մը հայաբնակ գիւղերն այժմ անմարդաբնակ են, իսկ շատերու մէջն ալ նախկին բնակիչներու հազիւ կէսը մնացեր են: Եթէ հնար լինէր ներքին դաւառներէն ևս դիւրութեամբ փախչել, այժմ այդ դաւառներն ալ աւեր ու անապատ, բնակիչներէն թափուր կը մնային, Աշխերտու նման:

Անցեալ ամսուն հայրենիք դարձող հայ պանդուխտներու քարտան մը կը զարնեն, կը կողոպտեն Համիդիէի հեծելազօրքերը կարնոյ և Խնուսի ճանքու վրայ, դիմադրութիւն ընող չորս կորիճ անգէն հայեր ոչխարի պէս կը մորթվին:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

Վոռուբաշ հայաբնակ գիւղը, որ 70-80 տունէ կը բաղկանայ և Վանէն քիչ հեռու է մի ամիս առաջ սոսկալի քստմենլի, աղէտի հանդիսատես եղաւ: Այս քստմենլի գէպքի հերոսները Համիդիէի հեծելազօրքերն են: Մատաղահաս աղջիկներու մի խումբ, թուով 13-14 հոգի, իրենց հետ վերցնելով 4 պատանիներ, կերթան ծաղիկ ժողվելու: Հենց այդ ժամանակ Համիդիէի հեծելազօրքէն 15-20 դիներալ քրդեր կը յարձակին աղջիկներու վրա. աղջիկները լեզապատառ կը սկսին փախչիլ և օգնութիւն սրտալ: Սոսկալի վայնասուն կը սկսի: Պատանիները կը յաջողին փախչել գիւղը լուր հասցնելու, բայց քիւրդերը կը հասնին ետևներէն և հասած տեղերնին կը մորթեն չորսն ալ: Այնուհետև կը սկսին միառմի լ կել աղջիկները և իրենց դազանական կրքերը յագեցնել: Մատաղահասներէն երկուսը չեն դիմանար դազաններու պատճառած ցաւերուն, արիւնաթաթախ շունչները կը փչեն նոյն իսկ դազաններու բազկաց մէջ:

Քիւրդերը չորս անգէն դիւղացիներ խողխողելէն և աղջիկները պղծելէն վերջ, բաց կը թողնեն, կարծելով թէ վերջիններս իրենց չեն ճանչնար:

Բայց մի քանիսը կասկածելով թէ ճանաչվեր են, հետամուտ կը լինին աղջիկներուն ևս բռնել, սպանել: Արևը մայր մտնելու ժամանակ կը լինի, աղջիկները բոլորովին մերկ, կը շտապին մէկ ու կէս ժամու ճանապարհը կտրել, գիւղ հասնել: Յանկարծ իրենց ետևէն ձայն կը լսեն և վախնալով թէ նորից այն բարբարոսներն իրենց ետևէն են ընկած, աճապարանօք քարերու ետևը թփերու տակ կը պահվին թշուառները: Եւ սխալված չէին. քիւրդերը արագաբար փնտուելով կանցնին: Աղջիկները կէս ժամէն վերջ գաղտագողի, զարտուղի ճանապարհներով իրենց կը ձգեն գիւղը: Այնուհետ քիւրդերը համախառնելով նորէն կը զան սպանվածներու մօտ, մէկի սկանջները կը կարնեն, կը վերցնեն հետերին: 8 հոգուց մի քանիսը կերթան դէպի Վարագ և կը մտնին Վարագայ փարախը, վանքից կէս ժամ հեռի, Վարագ

լեռան հարաւային ստորոտի վրա, այնտեղ կրակ կանեն, արեան հետքեր կը թողնեն և կանհետանան:

Դատեցէք, ինդրեմ, այս բարբարոս առազակները որչափ վստահութիւն ունին իրենցմէ աւելի առազակ տաճիկ վարչութեան վրա, որ նախ սպանութիւնը կը կատարեն ցերեկով, գրէթէ կէս օրին. երկրորդ, կոյս աղջիկները կը տանին իրենց որջը, ամբողջ երեք ժամ կը պղծեն, ապա երկու ժամու չափ դէպքի տեղի վրա լեռնային զբօսանք կատարելէ ետքը կը կորչին:

Մարդանպաններու Վարագայ փարախն երթալը միտք ունի. դէպքի ժամանակ սաստիկ կարկուտ եկաւ, հետեւապէս քիւրդերը իրենց կարծ խելքով փախստեան հետքերը թողուցին Վարագայ վանքի վրա, որին այնչափ հետամուտ է վերջերս արատաւորելու Բահրի փաշան:

Փարախի հետքը դատաստանի մէջ մեծ գեր պիտի խաղայ, ինչպէս կը տեսնենք յետոյ:

Եղեռնագործութեան միւս օրը Վոռուբաշիք դիակները բերին գիւղ. ամբողջ գիւղը սգոյ մէջ էր և արտասուք կը թափէր այդ անողորմ սպանութեան վրա: Անտերունչ ժողովուրդը երբէք յոյս չունենալով, թէ կանավարութիւնը կը պատժէ եղեռնագործներուն, կողքէր դիակները նոյն օրը թաղել: Սակայն դործը շուտով ձևի տակ դրվեցաւ. դիւղացիները սպանվածները սայլերու վրա դրին և բերին քաղաք: Արաք թաղի մեծ հրապարակը հասնելուն պէս, հայերը սաստիկ յուզված շրջապատեցին իրենց խողխողված եղբարց դիակները: Յիրաւի, մարդակերն ալ այդչափ անողորմ չէ, որչափ տաճիկ կառավարութիւնը և իր հաւատարիմ քիւրդերը: Չորսի դիակներն ալ ծածկված էին սրի մեծ վէրքերով: Թեւերի փափուկ միսը ձեռքերէն սկսած շերտ շերտ կտրտած, կախ էին ձգած մինչև վիղը. վիղները կտրած էին և միայն թողած էին ծոծրակի կաշին, որով գլխները կախ էր ինկած և անբաժան մնացած մարմնէն: Արաքի պահականոցի ոստիկանութիւնը փորձեց մէջ մտնալ և արգելել դիակները քաղաք տանելու: Բորբորված ժողովուրդն ընդդիմադրութիւն ըրաւ, զափօտաները վախնալով ետ քաշվեցան: Կնացքը, որ հետզհետէ կատուարանար գրգռված հայերից, Քեանդրէի թաղի մէջ կանգ առաւ անգլիական հիւպատոսի դրան առջև, վերջինը տունը չէր. ապա իջաւ Խաչփողոցը, ուր խոյնոտեալ դիակները տեսաւ ոռոսաց հիւպատոսի թարգմանը (հիւպատոսը բացակայ էր Վանէն), որտեղէն քիչ մը վար գալով ժողովուրդը սայլերը կանգնեցրուց հարուստ նալբանդեանի դրան առջև: Այդ գարշելի տան մէջ էր Աղթամարայ Խաչատուր կաթուղիկուսը, որին վալին 15 օրէ ՚ի վեր հրաւիրած էր Վան, որ լիբբ Պողոս եպիսկոպոսին ընկերացնելով, քանի մը ծանր խընդիրներ, կործանիչ դաւաճանութիւններ ՚ի դուխ բերէր: Իսկոյն պատգամաւորութիւն մը կամեցաւ մտնել կաթուղիկոսի սենեակը, բայց Խաչփողոցի պահականոցը 20 քայլ հեռու լինելով՝ ոստիկանութիւնն իսկոյն վրա հասաւ: Զափօտաներն աւագ փօշիսի հրամանով մորակներով, ճիպոտներով աշխատեցան ցրուել ժողովուրդը, սակայն բազմութիւնը գրոհ տալով յարձակվեց ոստիկանաց վրա և քշեց: Պատգամաւորները շուտ մը ներս

մտան, խնդրեցին կաթուղիկոսին ներկայանալ: Աերջինս տեղեակ լինելով այդ իրեն համար շատ անհաճելի դեպքին, դուրս եկաւ: Պատգամաւորները խնդրեցին վար իջնել, անմեղ զոհերը տեսնել և կառքով իրենց հետ քաղաք երթալ: Կաթուղիկոսը երկիւղից քանի մը խօսք կը կկմայ, ապա մտնելով պատուհանին, վախկոտ հայացք մը կը ձգէ դիակնեցուն, կեղծ ախ մը կը քաշէ և ետ կը դառնայ, երևի յուսալով, որ ոստիկանութիւնը շուտ կազատէ իրեն այս ձախորդութենէն: Պատգամաւորները, նկատելով անոր փախուստի պատրաստութիւնը, համարեա յարձակվելով կը պնդեն իրենց առաջարկը, բայց կաթուղիկոսը կը քսէ.

— Խնդրեմ, հանդարտվէք, տեսայ և ամեն բան կը պատմեմ: Վախին ու կերպով մը կը սողայ ներս, դուռը գոցելով: Մարդիկ ուժգին կը բարկանան դուռը և կը պահանջեն Աեհափառին, ըսելով.

— 2է՛ որ վախն Ձեզ Աղթամարից բերած է ժողովրդի ցաւերը դարմանելու, ուրեմն երթանք մեր ցաւերը տես:

Պօղոս եպիսկոպոսը լուսամտի փեղկը բանալով կը քսէ.

— Աղբար, մեզմէ ե՞նչ կուզէք. հոն, հոն գնացէ՛ք, ձեր առաջնորդարանը:

— Դաւաճան, շուն, քեզի ո՞վ կը հարցնէ, կը գոռան ամենը:

Քանի մը հոգի վար կիջնեն մարդ կանչելու, որ զօռով կաթուղիկոսին դուրս քաշեն: Փողոցին մէջ ուրիշ բան տեղի կունենար. Վախին հասնելով՝ միջոցներ ձեռք առած էր շփոթութիւնը զսպելու, այդ պատճառով ամեն պահականոցներէ ոստիկաններ կը վազեն: Ոստիկանները ժողովուրդը ձեղքելով աշխատեցան սայլերը ետ դարձնել, ամբօր կատաղի կերպով դիմադրեց և ետ մղեց. զափտիաները սուր և փայտ խաղցողին, ժողովուրդը՛ն ալ դիմեց իր կուռփին. 10-ի չափ հայերու և 5-6 ոստիկաններու գլուխ շարդվեցաւ, քիթ ու բերան արնով ներկվեցաւ: Մինչ այս շփոթութիւնը կը շարունակվէր, ստուար խումբ մը մտաւ կաթուղիկոսի բնակարանը և գոռալով կը պահանջէր կառք նստել:

— Դու, որ վախի խաթեր համար մատնիչ հարուստներու և գարշելի Պօղոս եպիսկոպոսի հետ միանալով՝ բռնի հանրագրութիւն կը կազմէք խեղճ ժողովրդի բերնէն, իբր թէ թիւրք, հայ և քիւրդ եղբոր պէս խաղաղ կապրին, եկ, եկ, տեսնենք ձի՛շտ է: Կաթուղիկոսն երկիւղէն ցամքած՝ ծպտուն չէր հաներ. ժողովրդի համբերութիւնը հասնելով՝ կուռփներով և քացիներով սենեակի դռները կը կոտորեն և Աեհափառին կը քաշեն ցած, դարձեալ իրենք ախուէն ձիանները կը հանեն և կառք լծելով՝ Աեհափառին կը բազմեցնեն:

Կաթուղիկոսը դողալով կը հարցնէ, ո՞ր պիտի երթանք:

— Նսի՛ հեռագրատուն, ուր հեռագիր պիտի զարնես սուրբանին և պետութեանց ներկայացուցիչներու, ինչ որ տեսար և ինչ որ ըսենք, ապա վախի մօտ, որոտաց ամբօրը:

Ամբօսի մի մասը սայլերը շրջապատած՝ շուտ առաջ կը գնայ, որ կառքը առաջ չեթմայ, իսկ մեծ մասը շրջապատած կառքը և ձիաններու սանձերը բռնած յամբօսութեանց յառաջ կը շարժվի: Պօղոս եպիսկոպոս ծածուկ ոստիկան մը կը կանչէ և խստիւ կը պատուիրէ ճանապարհին վրա գտնվող պահականոցը խստիւ դիմադրութիւն ընելու:

Սայլերն այդ պահականոցին հասնելուն պէս՝ ոստիկանները կարգերն, քանի որ հայերը քիչ էին. կառքը հասնելուն պէս, նորէն խիստ ընդհարում տեղի կունենայ ժողովրդի և ոստիկանաց մէջ, որմէ օգուտ քաղելով Աեհափառը կը հրամայէ իր ծառային փախչել. վերջինս սաստիկ մտրակելով, սրարշաւ ամբօսը կը ձեռքէ և կանցնի:

Այսպէս ամենաարդար բողոքը չնչին սխալով մը ապարդիւն հետեանք ունեցաւ: Եթէ գնացքը յաջողութեամբ քաղաք հասնէր, շփոթութիւնը մեծ ծաւալ պիտի ստանար, որովհետեւ լի օրերը Այգեհասանի մէջ շատ քիչ մարդ կը գտնվի. մեծ մասը քաղաք կերթայ:

Այժմ սպանվածներու դատաստանը կը տեսնվի, հետեւեալ նամակով կը հաղորդեմ:

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ձ Ն Կ Ա Յ Ի Ց

Անցեալներում կառավարութեան եկած մի հեռագիրը ժողովրդեան մէջ արտակարգ շունչների պատճառ դարձաւ. ժողովրդեան ինչ դասակարգի մէջ որ մտնելու լինէիր, միայն մի առարկայի վրա կը խօսէին. մին միւսի կը պատմէին լսած ցաւալի լուրի մասին, յուսալով աւելի ստոյգ և որոշ տեղեկութիւն իրարից իմանալ: Մարդիկ մոռցած էին անձնական ցաւերը: Տաճիկ հասարակութիւնն անգամ զբաղած էր սրանով: Ոմանք կը դողէին խօսակցութեան նիւթ երող Արխանեան Հաճի Գալուստի քաջութիւնը, ոմանք իր ընկերների այլ և այլ տեղերում կատարած գործերը, ոմանք էլ կը գովէին նրա ազնուական, հարուստ տան զաւակ լինելը, մի քանի լեզուներ իմանալը և միևնոյն ժամանակ իր հայրենական տուն տեղ, հարստութիւն, ընտանիք ձգած, ամեն տեսակ վիշտ, նեղութիւն յանձն առնելը Աբ. Կործի յաջողութեան համար:

Կառավարութիւնն արդէն վաղուց է սկսած հետամուտ լինիլ նրա ամեն մի քայլափոխին: Դեռ ձմեռը նա զօրք պատրաստեց Տէսիմի վրա հանելու ոչ թէ քիւրդերու դէմ, այլ Արխանեանի, որ այնտեղ բոյն դրած կը գործէր: Իւր զօրքը երկար ժամանակ այս կամ այն կողմը պտտելով, ոչինչ չը յաջողեցաւ և կորագ ուն յետ դարձաւ: Սակայն վերջերս, երբ Աեհափառի ճանապարհին գայմագամը թալանվեցաւ. Գարահիսարցի Աարդանի խմբի ձեռամբ և ամեն կողմ նորից մարդիկ հանվեցան այդ խումբը ձերբակալելու, Արխանեան իր ընկերներով Տէսիմից Արմտան վերադառնալիս՝ պատահաբար կը հանդիպի կառավարութեան խրկած զօրաց խմբերին: Արխանեան, շտապելով մի յարմար տեղ գտնելու պաշտպանութեան համար, կը մտնի իր ընկերներով մի բաւական մեծ պլրի մէջ, Արմտանից 3 ժամուայ հեռաւորութեամբ գտնվող ճանապարհի վրա: Զօրքերը բաց կաննեն նրանց վրա հրացաններ: Լուր կը տարածվի ամեն տեղ, որ Արխանեան պաշարված է, և զօրաց խմբերը գունդագունդ վրա կը հասնին: Կը գինվեն և շրջակայ տաճիկ գիւղացիք Աուլուշայի գայմագամի հրամանով: Պաշարողների թիւր կը հասնէր 600-700 մարդու, իսկ պաշարվածներն ընդամենը 8 հոգի էին. ինքը Արխանեանը, երկու Ակնեցիք՝ ճանիկ և Զարարեա,

երեք Արմտացիք, նոր մտած խմբի մէջ, մի Երզնկացի, Նազարի տղայ Արշակը և 1 հատ Արարկերցի: Ամբողջ 36 ժամ կը շարունակվի հրացանաձգութիւնը. խումբը կը ներդի հացի և ջրի կողմէն: Երեք անգամ կաշխատին կտրել բանակը և անցնել, չի յաջողվիր, այլ իրանցից կը կորցնեն Նազարի տղայ Արշակը, որը 7 հատ գնդակ ստանալով կը մեռնի. կը վիրաւորվի ոտիցը մի Ակնեցի, իսկ Արարկերցին հազիւ հազ բանակը կտրելով կը յաջողի խոյս տալ շրջակայ գտնված խմբերուն իմաց տալու, որպէս զի օգնութեան հասնեն: Մինչև այլ և այլ տեղեր իմաց տալը, գայմագամը կը խրկէ իր մայրը, կինը և գիւղի աւագ քահանան, որպէս զի համոզեն, որ անձնատուր լինի: Հաճի Գալուստ կը մերժէ: Բայց վերջը քաղցից ներդիւնով և յոյսը կտրելով օգնութեան հասնող խմբերէն, կրկին կը փորձէ կտրել թշնամու շղթան, բայց շարժապատիւնով բոլոր կողմէ՝ ստիպված կը լինի անձնատուր լինել: Ամենը շատ մեծ յարգանքով կը վերաբերվէին դէպի նա, չը համարձակելով կապել անոր ձեռները, ոտերը: Գայմագամը մինչև իսկ կառաջարկէ Հաճի Գալուստին իր ձին, ինքը նստելով բեռնակիր ձիու վրա: Քննութեան ատեն Հաճի Գալուստ յայտնած է, թէ ինք կառաջարութեան դէմ ոչինչ ունեցած չէր. սակայն մի քանի անգամ տունը խուզարկեր և հասգիսն փնտնէր հասցրեր են իրեն: Ահա թէ ինչու նա քաջվեր է լեռը ինքզինքը պաշտպանելու, թէ նա հասարակ աւագակ, մարդասպան չէ: Շրջակայ գիւղացիք կը վկայեն, թէ և այս մարդ է չի ի էջ է, բայց ոչ մի փնտս այդ մարդէն տեսած չենք: Հովիւներ կը սեն, թէ այդ մարդ յաճախ մեզ կը հանդիպէր և միշտ առատօրէն կը վճարէր վերուցած ոչխարի համար:

Շուտով նրան տեղափոխեցին Երզնկա, ուր մօտ 40 հայ բանտարկեալ կայ, որոնց թուում մի քահանայ և մի երևելի երիտասարդ բժիշկ:

Վարնոյ վայրի փաշան հոս եկեր է, յայտնի չէ դեռ ինչու. Տէլի Բէշիս ըսած շունն ալ նամակ գրած օրս Մուշ կը գնայ. երանի սրան մի հատ հրացան արձակող լինի. Աստուած ձայնս լնելու հաճեսցի:

Ն Ա Մ Ա Վ Պ Օ Լ Մ Ի Յ

Ի՞նչ յուրիս ամսէն սկսած հայ լրագիրք կը տպագրէին Էնկիւրէի բանտարկելոց դատը: Սա յայտնի դատի անունը միայն կայ, մնացածը այնպէս էր աղաւաղած և ծռած, որ մարդ բան մը չի հասկնար. բոլոր մասնակցողներ խենթ, աւագակ ու անբարոյական էին ցուցցած, առաջնորդներն ապիկար, սրիկայ հրատարակած: Կառավարութիւնը բոլոր հայ թերթերու հրամայած էր արտապել "Ճէրիտիէ Մէհաբիմ" պաշտօնական թերթէն այդ դատի պատմութիւնը: Հայ, Հայաստան, յեղափոխութիւն և խել մը ուրիշ բաներ, որ առաջ արգելված էին արտասանել անգամ, այժմ ազատ կը գրվէին: Կարձամիտ տաճիկը խել մը նապաստակ ուղեց աս մէկ հարուածով որսալ: "Նախ, յուզել թիւրք տարրը հայերու դէմ. երկրորդ՝ ցուցնել Եւրոպային, որ այդ տեսակ դէպքերու կարևորութիւնն տալու չէ, վասն զի գործ են քանի մը շարագործներու. երրորդ՝ որ հայ ժողովուրդը գո՛՛՛՛ է կառավարութենէ և դժգոհ յեղափոխականներէ:

չորրորդ ցուցնել հայուն, թէ յոյս դնելու չէ այդպիսի ցոյցերու վրա և թէ ադոնք հեշտ կը ճնշվին ու մասնակցողք խիստ կը պատժվին և հինգերորդ՝ քանի մը հոգի կախելով, ահ ու սարսափ տարածել գործիչներու և հայ ազգի վրա: Ասոնցմէ միայն մեկուն հասաւ թիւրք կառավարութիւնը-այն է՝ գրգռեց թիւրք տարրը հայերու դէմ. արդէն սրճարաններու մէջ իսկ սկսած են ըսել թիւրքերը. "խիանէթ էրմենիլար, բուլլար հէփսի քէսմելի(անհաւատարիմ հայեր, ատոնց ամենքին ալ կոտորելու է):"

Վաղուց արդէն յայտնի է ձեզ, որ 5 հոգի կախվեցան Էնկիւրէի և Մարգուանի դէպքերու համար. ամբողջ օրը դիակները կախ են թողնվել ահաբեկելու համար ժողովուրդը:

5-6 օր շարունակ երկաթուղով Պօլիս կը բերէին դատապարտեալները ձեռք, ոտք շղթայակալ: Ատոնց մէջ յայտնի է Սրբուկը(Սրբուհի), 25-26 տարու առողջակազմ, սևաչեայ, գեղեցիկադէմ և համակրելի հայ կինը: Ասոր ալ ձեռք ու ոտքը շղթայած էին: Սրբուկի հետ էր և Տէրէվանքի Դանիէլ վարդապետը, որու կարգալուծ ըրաւ այս օրերս սուտ հրատարեալ Աշղեան պատրիարքը:

Ամեն օր բանտարկեալք կը բերվին գաւառներէ. ՚ի միջի այլոց և քանի մը դպրոցական աշակերտներ բերվեցան վերջին օրերս:

Սկսված են խիստ ձերբակալութիւնք ՚ի Պօլիս: Գաւառացի խել մը համալ ու գործաւոր բանտ են նետած: Շատերը ձերբակալվելու և խուզարկվելու մտանգի մէջ են: Ատով կուզէ շշկլած կառավարութիւնը խեղդել հայկական շարժումը: Եւրոպական պետութեանց միջմտիլը խստացեր է:

Կասկածի ենթարկվեցաւ ՚ի միջի այլոց և Արիկ Անձեանը, որ սաստիկ թիւրքամոլ է: Եթէ այդ տեսակը կը կասկածվի, ալ ենթադրէք մէկալներու վիճակը:

Վերջերս կառավարութեան պահանջմամբ քաղաքէս 24 ժամու մէջ արտոնվեցաւ անգլիական հիւպատոսի միջոցով իր հպատակ պ. Մկրտիչ Ծսայեանը, որ մտեր էր հրէշաւոր Աշղեանի կացարանը, ցոյց էր տուեր ժողովրդի դառն վիճակը, իրերու ողբալի դրութիւնը և պահանջեր էր կամ իսկոյն հրատարական տալ, կամ հարկաւոր խիստ միջոցները գործադրել: Արագնագոյն Աշղեան իմաց է տուեր վարչութեան, որ և ստիպեր է արտորել մայրաքաղաքէս:

Աշղեան սուտ հիւանդ ձևացնելով, 250 ոսկի ալ ստակ տալով, Եալովայի ջրերը ղոկեց թիւրք կառավարութիւնը, իսկ տեղը հրաւիրեց Երուսաղեմաց Յարութիւն պատրիարքը, որ թիւրք կառավարութենէ ալ աւելի թիւրք է և թէ Աշղեանէ ալ աւելի համարում ունի ազգի առջև. սա արդի պայմաններու մէջ կրնայ յաջող գործիք ըլլալ կառավարութեան ձեռքը: Յարութիւն պատրիարք ՚ի դերը չը հանեց վարչութեան յոյսերը: Անցեալ կիրակի Մայր Եկեղեցու մէջ նշանաւոր քարոզ մը խօսեցաւ, որ լեցուն էր բարեգութ Սուլթանի առ Հայս ունեցած խնամոց ու մարդասէր վարմանց գովեստներով ու անոր կենաց համար ըրած մար-

Թանքներով: Քարոզիչը դարձաւ ասանձնապէս մայրե-
բուն և յորդորեց: որ իրենց զաւակները կրթեն, դաս-
տիարակեն հպատակութեան և հնազանդութեան հո-
գով դէպի ամենաողորմած Սուլթանի գահը, որ օր և
գիշեր" քունը կտրած կը մտածէ Հայու հանգստութեան
ու բարօրութեան համար:" Քանի մը վարձկան ստորա-
քարչներ ու լրտեսներ "Ամէն" ըսին, իսկ ամբողջ լրտ-
հետախուզող զգուշի բերնէն դուրս եկած արեւի զըզ-
ւեի խօսքերու ծանր տպաւորութեան տակ:

Հասարակ ժողովրդի մէջ լուր է տարածուիչ, որ Հայ-
րիկ օձվելէ զինի պիտի հրաժարէ Աշգեան ՚ի պատրի-
արքութենէ և մինչև իսկ կարգալցած ընէ զինքը, ինչ-
պէս և Անայ Պօղոս եպիսկոպոսը: Հասերը կը սենյ,
թէ, եթէ այդպէս չընէ, ոչինչ մարդ է և Հայրիկ կոչ-
ման անարժան: Տեսնե՞ք, թէ ուր կը տանի ժողովրդի
այդ հաւատը . . .

Հաստատ աղբիւրէ ըսած եմ, որ վերջին ժամանակս
Սուլթանը ժողով մը կազմեց և տրամադրութիւն յայտ-
նեց հայկական դաւաճներու մէջ բարեփոխումներ մը տ-
ցնելու: Բայց նախարար յայտնեցին, որ ալ հարկ չը
կայ հայկական ինչիւր մէջ բերելու, քանզի ոչ մէկ գա-
ւառի մէջ հարկ մեծամասնութիւն չեն կազմը և սկսած
են դուրս գաղթել: Իսկ ազոնց շարժումները խափան-
ված են, ընկերութիւնք քայքայված և առաջնորդները
կամ բանտերու մէջ կը փակին, կամ օտար երկիր կը
թափառին: Սակայն մասնաժողով մը կազմված է, բայց
ոչ թէ բարենորոգմանց, այլ հայկական շարժումը խա-
փանելու, բողոքները խեղդելու, ձմելու, Եւրոպացոց աչ-
քը թող փչելու համար:

Ողորմե՛ք տերութիւն, որ յոյսը դրեր է բանտի և կա-
խաղանի վրա միայն . . .

Ս Ա Ս Ո Ւ Ն Ի Տ Ե Ն Ե Վ Ա Գ Ր Ա Ի Թ Ի Ն

Գ. Պօլսոյ հանրածանօթ յեղափոխական պ. Միհրան
Տամատեանը, որ երկու տարիէ ՚ի վեր Մշոյ կառավա-
րութեան համար շատ մեծ փորձանք դարձած էր և
զոր բուն ու համար կառավարութեան բոլոր ջանքերն
ապարդիւն անցած էին, վերջապէս վերջերս բռնվեցաւ,
բայց ոչ թէ կառավարութեան, այլ վատ և անպետ
հայերու ձեռքով:

Աերդիշեալ անձնուրաց դործիչն Ալվարիճցի Սողո
անուն ընկերի հետ Ս է մ ա լ գիւղը գտնված միջոցին՝
այդ գիւղի ձերբակալված Գուրգէն Աւսի եղբայր Դա-
վոն ու հորեղբայրը, գիւղի քահանան, իմանալով անոր
անող, իմաց կուտան գիւղի մէջ գտնված ոստիկանին,
որ իր հետ առնելով Խօջանցի Տէվրիշը, անոր երկու-
նը պարտէ և Խիյանցի երկու քրոջեր, կը պաշարէ գոմը,
որ պահված էին: Յեղափոխականները դիմադրութեամբ
գոմէն դուրս կելլեն ու կուզեն կովելով փախչել: Բայց
այդ վատ հայերը խորամանկութեամբ, իբր թէ օգնու-
թեան կը հասնին, յանկարծակի անոնց ձեռքերէն զէն-
քերը կը խլեն, կը ձերբակալեն ու կը յանձնեն ոստիկանին:

Սոյն լուրը շրջակայ գիւղերէն Կէլիեկի գէնցիք և
Ալեացիք իմանալով՝ զինված կը յարձակին Սէմալի վրաս
և կուզեն անոնց ըրած վատութեան փոխարէն պատժել:

երկար ատեն կովելէ և 4-5 մարդ վիրաւորելէ վերջ՝
Սէմալի կանանց կողմանէ եղած թախանձանաց վրա
ետ կը դառնան:

Մշոյ կառավարութիւնը Տամատեանի բռնվելուն լու-
րը առնելուն պէս, ամենավատ Ի ս կ է ն գ եր հարի-
րապետի հետ մէկ տեղ մօտ 100 ոստիկաններ ճանապ
կը հանէ դէպի Սէմալ, որք ճանրան կը դիմաորեն և
խեղձին ծեծելով և արհամարհով՝ Մուշ քաղաք կը
տանին, ուր միայն երկու օր պահէ է վերջ՝ գիշերանց
Բաղէշ կը տանին: Ճանրան Բաղէշ տանելու ատեն ոս-
քը կը կոտորեն, որպէս զի չը կարողանայ փախչել: Սողոն,
Տամատեանի ընկերը, շատ կը նեղեն, որպէս զի յայտնէ
ընկերները, բայց նա գովելի մարտիրոսութեամբ խու-
ռու մտնջ կը մնայ մինչև վերջ:

Վրավի, թէ Տամատեան շատ յանդուգն պատասխան
տուած է հարցաքննութեան, որոյ վրա Մշոյ թիւրքերն
աւելի ևս վախեցած են, փոխանակ վստահ լինելու, որ
երկրին խռովարար բռնվելով, այլ ևս խաղաղութիւն
պիտի տիրէ: Թիւրքին մէկը ձեռքը ծնոսին դրած՝ կըսէ.
"նոր գիտեմ, որ խռովութիւնը Տամատեանի բռնվելէն
վերջ պիտի սկսի:"

Տամատեանի բռնվելէն վերջ կառավարութիւնը կը
մտածէ, որ Սասուն ընկճելու ժամանակ է, և կը փութայ
Զիլանցոց յայտնի շէյխերուն նամակ գրել և խնդրել, որ
զանազան քիւրդ ցեղեր գրգռեն ընդդէմ Տալփորկայ և
միացած յարձակում գործելով անոր վրա, գրաւեն զայն:
Միևնոյն ժամանակ Մուշէն, Բաղէշէն, Կարինէն և Տիդ-
րանակերտէն զօրքեր կը հաւաքին Տալփորկայ քարու-
քանդ ընելու դիտաւորութեամբ: Նախ Բագրանցիք,
Խարջանցիք, Սասունցիք և քանի մը ուրիշ ցեղեր հա-
ւաքված Տալփորկի քով պատգամաւոր կը շրջեն, ըսե-
լով. "Թագաւորին հնազանդեցէք և հարկ տուէք:" Տալ-
փորկիցիք կը պատասխանեն, թէ Տաճկաստանի մէջ մէկ
Թագաւոր չը կայ, այլ ամեն մի քոստա քիւրդ կամ թիւրք
Թագաւորութիւն կը ծախէ. մէք փոխանակ Թագաւորին
հնազանդելու, Աստուծոյ կապաւինենք և չենք թողու-
ր, որ ոչ մի ոտք կոխէ այստեղ: Այս պատասխանին վրա,
քիւրդեր մօտ 1000 հոգով գաղանային աղմուկով կը
յարձակին Տալփորկայ վրա: Տալփորկիցիք քրդերու ճան-
բան փակելու համար կը քանդեն Սասունայի քարէ կա-
մուրջը, որ դարերու անցքերուն վկայ եղած էր: Քրդեր
այլ և այլ կողմերէ կը յաջողին Տալփորկի մտնել, բայց
Տալփորկիցիք Ֆ ը ո - Ֆ ը ո քար քաշվելով և ճանքա-
ները պահպաններ դնելով կը սկսին կովել. կոխը
սարսափելի կը լինի և կը տէէ ամբողջ մի օր: 35 քիւրդ
և 6 հայ կը սպանվին, բազմաթիւ վիրաւորներ քրդերէն,
իսկ հայերէն 4-5 միայն: Այդ կուէն վերջ քրդերը կը
քաշվին, բայց ամեն կողմէ եկած զօրքերը կը պաշարեն
Սասուն և ամիսներով պաշարած կը պահեն:

Սասունի այս ճգնաժամին մէջ՝ ուրիշ տեղի հայեր մի-
այն խօսքերով ժամանակ կանցնեն. անօգնական Սա-
սունցիք միմիայն իրենց չախմախիով յուսահատական
ճիգ կը թափեն ոչ թէ միայն մարդակեր ճիւղերուն,
այլ և անօթութեան դէմ: Սասունցիք Այդբա լեռը կը
քաշվին, իրենց տուններն ու արտերը բալթորը կը քան-

գուին զօրքերու կողմանէ: Բաղէշի կուսակալը Սեմալէն Թալիբ էֆ. (խտարէ ժողովի անդամ) պատգամ ղրկելով, կըսէ. "Չեզնէ գրաւած ոչխար, ջորի էշերը ձեր տուրքի տեղ համարինք, և դուք ալ հնազանդագիր մը գրելով Սուլթանին, ըսէք, թէ Տամատեան մեզի գայթակղեցուց: Բաղէշի կուսակալը բացասական պատասխան ստանալով, ետ կը դառնայ դէպի Բաղէշ, և Շէնիք Սեմալայ միջի զօրքերն ետ կը քաշվին: Ինչպէս Ալիէկիզէնցիք, նոյնպէս և Շէնիքցիք ու Սեմալայ մէկ մաս գիւղէն լեռ կը քաշվին, և երբ զօրքերը կը քաշվին, նորէն գիւղ կը վերադառնան:

Տամատեանը ձերբակալող Տէվրիշը Ղզըլ-Աղաճէ Մուշ գնացած ժամանակ Ս. Օհաննու վանքի անտառէն խուժք մը երիտասարդներ կը հարստեն սպանելու դիտաւորութեամբ, բայց դժբաղդաբար չեն յաջողեր: Տէվրիշ կառավարութեան իմաց կուտայ, որը վնասը միաբան Մկրտիչ վարդապետէն բացաղուութիւն կը պահանջէ յիշեալ խմբի մասին, թէ որոնք են: 'Նա վախնալով' թէ իր Խաղաղութիւնը խռովի, առաջին անգամ միառմի մտնացոյց կընէ միքանի երիտասարդներ. Արմենակ Տ. Մամբրէեան, Ասատուր Տ. Օհանեան, Յակոբ Տ. Միքայելեան, Արթիւն և Մկրտիչ Յակոբեան, որք արդէն հեռացած էին, բայց կառավարութիւնն սյդ անձանց փոխարէն կը ձերբակալէ այլ երիտասարդներ:

Բացի ասկէ, Իսկէնդերը 2 ամսէ աւել 25 ձիաւորով Ղզըլ-Աղաճի վարժարանի մէջ նստած անլսելի չարիքներ կը հասցնէ դիւղացոց. փախստականներուն բռնելու պատրուակաւ այլ և այլ պատուհասներով կը կեղծէ և իր կրքերին յագորդ տալու համար կանանց անպատիւ առաջարկութիւն և սնտրի խոստում կընէ:

Մշոյ մօտ էշու վրա բարձրած 10 սխայէն աւելի վառօք կը բռնվի, որ կը վերագրվի փախստականաց:

Գառնի գիւղի քահանան Տ. Օհաննէս և ուրիշ երկու գլխաւոր հայեր կը ձերբակալվին փախստական պահած ըլլալու ամբաստանութեամբ:

Այսքան ճշման և հալածանաց մէջ իսկ, թիւրքեր աւելի կը վախնան հայերէն, քան թէ հայերը, որք ոչ մի ապաւէն և օգնական չունին, բացի ինքօպուլթենէ:

Լ Ա Ռ Ի Ե Ի

Վ. Ա. Ն. Բերդակցի հայ մը բանտի մէջ մեռուցին տաճիկները. թշուառականն 93 օր ձգած էին փոլիս, միշտ ենթարկելով քաղցի ու ծարաւի: Մեռնելու ատեն իբր թէ իմաց կը տան հայ քահանային, որ հաղորդէ: Վերջինս կերթայ և կը տեսնէ, որ հիւանդ կարծեցեալը 3-4 օրուայ մեռած է:

— Նահատակվեցաւ յայտնի գործող երիտասարդ Պետրոս Շատախցեան, որը բոլոր շրջակայքի հերոսն էր և կը վայելէր խորին համակրութիւն ու սէր: Երեք ամիս էր, ինչ բանտարկված էր...

— Երեք հայ և երկու թիւրք, իբրև նախնանի և Հասան փաշայի կուսակիցներ, աքսորվեցան:

— Տաճիկներ երեք անգամ գաղտնի գիշերով շուկան կրակ ձգեցին. սակայն հայ գիշերպահները շուտ

իմանալով, կրակը հանդրին: Շուկան համարեա ամբողջապէս հայերունն է: Այսօր վախնալով որ կառավարութիւնը կողմէ գրգռված հայերուն աղետալի հարուած մ'ալ տալ, սկսան խանութները դատարկել և ապրանքները տեղափոխել իրենց տունները: — Յակոբ Ղզըլէեան կեղտոտ հայր, որ երկար ատենէ ՚ի վեր լրտեսութեամբ ու մատնութեամբ կը զբաղէր և շատերու բանտարկութեան, նոյն իսկ դատապարտութեան պատճառ եղած էր, անցեալներ վերջապէս մատնիչներու արժանի պատիժն ստացաւ: Տեղական յեղափոխական խմբի որոշմամբ մահուան էր դատապարտված յիշեալ մատնիչը, և անցեալներս դատապարտուած ամենայն յաջողութեամբ գործադրվեցաւ. յեղափոխականի մը ըզլովքերի 2 հարուածով մատնիչը սպանվեց: Այդ մահը ընդհանուր ուրախութիւն պատճառեց ժողովրդին: Սպանիչը ցարդ ձերբակալված չէ, չը նայելով կառավարութեան ձեռք առած բոլոր ջանքերուն: Կառավարութիւնը զայրոյթ էն սկըսած է ալ ու ձախ ձերբակալութիւններ անել. բանտերը լեցված են հարիւրաւոր անմեղներով:

Պ Օ Լ Ի Ս. Տամատեան այժմ հոս կը գտնվի և կը դատվի. տարակոյս չը կայ, որ ցմահ դատապարտութիւն է վճռվելու: Բերին, և առաջակապետ Հաճի Գալուստը, որու հայրը հարուստ մէկն է և կապեր ունի բարձր պաշտօնեաներու հետ. կը յուսադրեն, որ ոսկու կախարդական զօրութեամբ Գալուստ պիտի աղատի: Խեղճ հայր չը գիտէ, թէ դեղին ոսկիներն ալ զաւակի հետ կորցնելու է:

Լ Ս Ո Ւ Մ ենք, որ յայտնի աւազակապետ Ա Ր Ա Բ Օ Ն իր խմբի հետ միասին Ն Ա Հ Ա Տ Ա Կ Վ Ե Լ է: Ազատվել են 2 հոգի: Սպասում ենք մանրամասն տեղեկութիւններ:

Քաղում ենք մեր ստացած մի մասնաւոր նամակից հետևեալ բնագործ կտորը.

"Այս տարի ևս բռնութիւնը կան մեր գաւառում. գիւղացին չէ կարող ապահով կերպով արտերը սերմանել: Մանաւանդ մեր գիւղ ամենից գերազանց երկիր զալի է, վասն զի բոլոր շարութեանցն փոխարէն կրկնապատիկ հատոյց թշնամեացն: Առ այս ամենքը թշնամանալով, յայտնապէս կաշխատին Օ. գիւղի ճրագը մարելու: Թէև մենք անվախութեամբ կը պատասխանենք հանապազ, միայն մի նեղութիւն կը ճնշէ մեզ, այս է... չունինք այնչափ պաշտպանութեան համար գործիք: Այս անգամ... դուք գիտէք..."

Հ Ա Յ Յ Ե Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն Ը Տ Ա Ճ. Բ Ա Ն Տ Ո Ւ Մ

Այսօր վանայ բերդը լիբ լեցուն է հայերով: Ձերբակալութիւնների շարքեր առաջ կը բերէի, միայն այսօրուայ թղթակցութեանս նպատակն այդ չէ, այլ այն, թէ ինչ տեսակ զարհուրելի տանջանք, ինչ գազանային չարչարանք կը կրեն յեղափոխական բանտարկեալներն անգութ տաճիկի անարգ բանտում...

Գիշեր է. խորին լուսութիւն կը տիրէ. քաղաքը և ընդհանուր բանտի ամեն կալանաւորներ քնած են: Ն-ի առանձնարանը կը մտնեն 5 բարբարոսներ. դատաւորը

միլեագիմը և 3 զափտիաներ: Գիշեր ժամանակ բանտ այցելելը վատ նշան է. զգալով այդ կալանաւորը սարսափաճար վեր կը թռչի տեղէն, ձեռներու և ոտներու գոռ շղթաներու ձայնով սարսուռ ձգելով նոյն իսկ եկած բարբարոսներուն վրա: Եւր գունատ, ուժասպառ է, գրէթէ գիակացած. վերջին 5 օրուայ շարունակ քաղցածութիւնը իր դերը կատարեր է... Հայ յեղափոխականը դատաւորի առաջ, մութ, խոնար սենեակի մէջ, կէս գիշերին, պէտքէ "խոստովանվի իրեն մեղքը", իրեն մասնակցութիւնը փոխառ նուրիի սպանութեան մէջ. նա պէտք է մատնէ իրեն ընկեր. միւլիւրներուն (յեղափոխական), որք կը ձգտին ձեռք բերել հայրենիքի անկախութիւնը և որք կը մեղադրվին տաճկական դարձելի փոխներէն ամենաբարձր իր, նուրիի սպանութեան մէջ: Սակայն, զուր յոյսեր...

— Ես անմեղ եմ, ես չեմ ճանչնար ոչ մի յեղափոխական. ես ոչինչ չեմ գիտեր, կրտէ նւր:

Կարկուտի պէս կը թափվին հայհոյանքներ մէկը միւսէն քստմանը, սպառնալիքներ մէկը միւսէն սարսափելի, բայց նւր անդրդվելի է:

— Ես մեղաւոր չեմ. ես ոչինչ չը գիտեմ, կը կրկնէ հարիւրերորդ անգամ անվեհեր կալանաւորը:

— Դու անմեղ ձեռքեր, դու մի յայտնիր ընկերներուդ, քեաֆր օղի. հինգ օրուայ քաղցածութիւնը քեզի չը խելօրցուց. մենք այլ միջոցներու կը դիմենք, կը գոռայ կատարած դատաւորը:

Քառորդ ժամէ յետ աղեկտուր ձիջ մը կայծակի արագութեամբ անցաւ բանտի բոլոր բաժանմունքներով. հայ կալանաւորները սարսափաճար վեր թռան քնած տեղերէն, իրար անցան, մօտեցան դրան, պատահաններուն, շնչասպառ ախանջ կը դնեն:

Վրկին և կրկին լավեց հեծկտոց, հառաչանք, ախ ու վախ, օգնութիւն, օգնեցէք և այլ բառեր:

Հայ կալանաւորները հասկացան գործի էութիւնը և սկսեցին բառնցքներով բաղխել դռները, լուսամուտները, հայհոյել, անիծել անարդար դատաւորին, անխիղճ զափտիաներուն, բայց ՚ի զուր...

Նահատակվողը նւրն էր. անոր ձեռները և ոտները դրեր էին փայտեայ մեքենաներու մէջ և աստիճանաբար կը կքէին, որմէ անբաղք կը ձկտէր, աղիողորմ ձայներ հանելով: Վերջապէս նա ուշքէ գնաց, սկսելով զառանցել և այդ զառանցման մէջ անգիտակցաբար խոստովանվել իր մասնակցութիւնը և իր մի քանի պատահական ընկերներու անունները...

Աւրախացած դատաւորը կը կազմէ խկոյն արձանագրութիւն և, դադարեցնելով անգութ բռնութիւնները, կառաջարկէ կալանաւորին իր խոստովանութեանց տակ ստորագրվել: Աւշքի եկած նւր, չը յիշելով իր զառանցութիւնները, նորէն կը պնդէ:

— Ես ոչինչ չը գիտեմ, ես մեղաւոր չեմ, ես ոչ մի յեղափոխականի անուն չեմ արտասաներ:

Անդու զահիճ-դատաւորը կը կատարի և կը հրամայէ ձեռք առնել անամօթ տանջանքներու նոր շարքեր... Զափտիաները կը դիմեն փայտի, շիկացած երկաթի հարուածներուն և, գցելով բազմաչարչար հայու բազմա-

չարչար որդուն ուշագնացութեան մէջ, գլխու վրա կախելով զնա, կը թողուն, կը հեռանան բանտէն, անվեհեր յեղափոխականէն մի այլ անգամին խոստովանութիւն ստանալու յուսով...

Բարբարոսները կացնին նւր ընկերոջ սենեակը:

— Անհաւատի որդի. դու հիմի խելօրցացած կը լինիս նւր մեր տուած տանջանքներէն, որ կը լսէիր. ասա, ո՞վ սպանեց նուրիին. ո՞վքեր են այն լիբը միւլիւրները, որք կը ձգտեն չեղած Հայաստանը վերականգնել, շփոթութիւն և ապստամբութիւն պատրաստելով մեր ելկրի մէջ. ասա, թէ ոչ նւր շատ տանջանք կը ստանաս...

Ամբողջ օրերով քաղցած, ծարաւ, մութ բանտի խոնար, բորբոսնած գետնի վրա շղթայակապ նստելուց դալկահար, մաշված, կաշի դարձած բանտարկեալը, հաւաքելով վերջին ոյժերը, թէ և սառնութեամբ, բայց կիսասարսափ կը պատասխանէ:

— Զը գիտեմ, ոչինչ չը գիտեմ, ՚ի զուր տեղը զիս բանտ էք ձգեր. ես անմեղ եմ:

Դա բանտարկեալի առաջին խոստովանութիւնը չէ, ուստի լիբը կառավարութեան անխիղճ անարդարատութեան պաշտօնները կը դիմեն խկոյն տանջանքներու: Մագահատ արին յեղափոխական հայի ընչացքի մի մասը. չստանալով ցանկալի խոստովանութիւն, բեւեռը դրին թշուառականի գլխուն և մուրճի հարուածներով զարկին ուղեղը: Սարսափելի ցաւի տակ կալանաւորը կը յայտնէ մի տասը մարդիկ, որք կը ձերբակալվի խոստովանողը մի երկու օրէ յետ, երբ աւելի լաւ պայմանի մէջ պարելով կը կազդուրվի և կը զգայ իր արածի բոլոր ահաբեկութիւնը, սաստիկ ուժով կը խփէ գլուխը փոխի պատերուն և ջարդ ու փշուր կանէ: Փոխադրված է ընդհանուր մասը, ուր բժիշկը կը բուժէ ջախջախված գլուխը, թէ և մերձ ՚ի մահ է...

Երբ կառավարութիւնը ոչ մի յոյս չի տածեր բանտարկեալէն որ և է խոստովանութիւն ստանալու, կը դիմէ թոյնի զօրութեան:

Նորերու մի հայ միւլիւր կասկածվելով՝ ձերբակալված էր. կառավարութիւնը, տեսնելով, որ զուր են գործ դրած բոլոր միջոցները մի որ և է տեղեկութիւն ստանալու նպատակով, թունաւորեց խեղճը և վերջին շունջը փչելու ատեն տուեց ազգակիցներուն: Ճանապարհի հայ միւլիւրը վախճանվեց և գլխու մազերը խմած թոյնն թափվեցան:

Օրերով շարաթներով քաղցած ծարաւ պահել, շիկացած, տաք երկաթով այրել մարմնի այլ և այլ մասերը, գլխու, ընչացքի մազերը փետել, գլխուն բեւեռ զարնել, ոտերը, ձեռները տախտակներու մէջ խիստ սնեղմել, կքել, փշրատել... Ինչ տեսակ բարբարոսական տանջանքների չեն ենթարկեր հայ յեղափոխակներ լիբը Սուլթանի անարգ բանտերում... 1910

Նուիրատվութեան ցուցակը կը սկսենք հրատարակել հետևեալ համարից, որ լայ կը տեսնի Յունվարին:

Դաշնակցութեան անձնօթներից խնդրում է թըլթակցութեան և նուիրատվութեան համար դիմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London